



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

16 դեկտեմբերի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի
Ա. Թունյանի

Քննության առնելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «ՎՏԲ-
Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն 2015թ. նոյեմբերի 26-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝
խնդրելով.

*«ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ
հոդվածի և 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին հակասող ճանաչել ՔԴՕ 102-րդ հոդվածի
2-րդ մասի՝ Վերաքննիչ դատարանի կողմից թիվ ԵՄԴ/1613/02/13 քաղաքացիական գործով
մեկնաբանությամբ կիրառումը (դատական պրակտիկան), կամ*

*ՔԴՕ 102-րդ հոդվածի 2-րդ մասում և/կամ ՔԴՕ 35-րդ հոդվածի 2-րդ մասում առկա օրենքի բացը
ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի և
31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին հակասող՝ այնքանով, որքանով, որ դրանք իրավակիրառ*

պրակտիկայում հստակ հնարավորություն չեն տալիս երրորդ անձին դատական կարգով պահանջել հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասի հատուցում»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկան հանգեցրել է նրան, որ օրենսդրորեն ստեղծվել է ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին հայցի ապահովման միջոց կիրառելու հետևանքնով վնաս պատճառելու հնարավորություն, որի հատուցման իրավական հնարավորություն ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը չի ունենա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 102-րդ հոդվածի 2-րդ մասի հակասահմանադրականությունը հիմնավորելիս դիմողը նշում է, որ օրենսդրի և իրավակիրառողի կողմից վիճարկվող դրույթին տրված բովանդակության պայմաններում, երբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը զրկվում է դատական կարգով հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասի հատուցում պահանջելու հնարավորությունից, առկա է օրենսդրական բաց:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ չի կիրառվել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,

• որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,

• որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,

• որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**: Հետևաբար, նշյալ դրույթի մասով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք:

3. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վիճարկվող դրույթներից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի մասով առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ այդ առնչությամբ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի մասով՝ մերժել:
2. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:
3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

16 դեկտեմբերի 2015 թվականի

ՄԴԴԿՈ/1-29